ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

Вопросы истории КПСС

1966, № 4

Ամսագրի չորրորդ համարը սկսվում է Ն. Պ. Ֆիլիմոնովի «Նյութական շահագրգռվածության լենինյան սկզբունքների իրականացումը կուսակցության կողմից՝ ժամանակակից էտապում» հոդվածով։ Հեղինակը նշում է, որ սովետական իշխանության հաստատման առաջին տարիներից իսկ մեծ նշանակություն է տվել մեր կուսակցությունը նյութական շահագրգռվածության լենինյան սկզբունքները կյանքում իրագործելուն։ Այդ սկզբունքները սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման բոլոր էտապներում հանդիսացել են ՍՄԿԿ տնտեսական քաղաքականության կարևորագույն էլեմենտները։ Նյութական շահագրգռվածության լենինյան սկզբունքների իրականացման գործում առաջընթաց քայլեր կատարվեցին մեր կուսակցության Կենտկոմի մարտյան և սեպտեմբերյան (1965) պլենումների որոշումներից հետո։ Այդ ուղղությամբ կարևորագույն ներդրում կատարեց ՍՄԿԿ XXIII համագումարը։ Հեղինակը մանրամասն վերլուծում է նյութական շահագրգռվածության լենինյան սկզբունքների իրագործման նպատակին ուղղված կուսակցության և սովետական կառավարության միջոցառումները մեր հասարակության զարգացման բոլոր էտապներում և ցույց տալիս այդ սկզբունքների իրականացման որոշիչ դերը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար մղած պայքարում։

Ամսագրում տպագրված Վ. Ի. Վասիլևի «Լենինյան արտաքին քաղաքականությունը և զարգացող երկրները» հոդվածում հետաքրքիր հարցեր են բարձրացված սոցիալիզմի երկրների և Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի ազատ պետությունների փոխհարաբերություններ ի ամրապնդման, ինչպես նաև Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության և ազգային-ազատագրական շարժումների կապի մասին։

«ԳՍՄԿ պայքարը ԳԴՀ-ի դեմոկրատական ուժերի կոնսոլիդացիայի համար» հոդվածով հանդես է եկել Գերմանիայի սոցիալիստական միասնական կուսակցության Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Գերման Մատերնը։ Հոդվածում հիմնավոր փաստերով ցույց է տրված Գերմանիայի կոմունիստական կուսակցության և սոցիալ-դեմոկրատական կուսակցության միասնական պայքարը ֆաշիզմի դեմ, ցույց է տրված կուսակցության միջոցառումները բոլոր ուժերի կոնսոլիդացիայի միջոցով լայն ծավալով պայքարելու Գերմանիայի դեմոկրատական հանրապետության ժողովրդական տնտեսության և կուլտուրական շինարարության հուժկու վերելքի համար։

Հետաքրքիր նյութեր է տպագրված նաև ամսագրի «դեպի Մեծ Հոկտեմբերի 50-ամյակը», «հաղորդում», «կոնսուլտացիա», «նամակներ և թղթակցություններ», «պատմագրություն և աղբյուրագիտություն», «գրախոսություն և քննադատություն» և «գիտական կյանք» բաժիններում։

КОММУНИСТ

1966, № 4 ԵՎ № 5

Ամսագրի «Նոր հնգամյակի պրոբլեմների քննարկում» ընդարձակ բաժնում տպագրված են Կիսելևի «Մեծ ուղու կարևոր էտապը», Ա. Դորվայի և Վ. Զիրնիխի «Աշխատանքի արտադրողականության աճը արդյունաբերությունում», Վ. Դոդորցևի «Տեխնիկական առաջադիմության տնտեսական խթանումը» և այլ հոդվածներ։

«Գաղափարախոսություն, գիտություն, կուլտուրա» բաժնում զետեղված է Վ. Պաշուրայի, Վ. Սալովի, Լ. Զերեպնինի «Կուսակցականության սկզբունքները պատմական հետազոտության մեջ և նրա ժամանակակից քննադատները» բովանդակալից հոդվածը։ Այստեղ հեղինակները քննարկելով պատմության հետազոտման կուսակցականության սկզբունքները, մատնանշում են, որ պատմական գիտությունը հենվելով մարքս-լենինյան մեթոդոլոգիայի վրա, ստեղ-

ծում է նախադրյալներ ժամանակակից էպոխայի դիտական ընկալման համար, օգնում է կողմնորոշվելու սոցիալ-քաղաքական բարդ հարցերում։ Պատմության գիտելիքները օգնում են երիտասարդ սերնդի աշխարհայացքի ձևավորմանը, հնարավորություն են տալիս տիրապետելու հասարակության զարգացման օրենքներին, դրանով իսկ բացահայտել քաղաքականության գիտական հիմքերը։ Պատմությունը հնարավորություն է տալիս հասկանալու ներկա կյանքի պրոցեսները և գալիքը։

Այնուհետև հեղինակները մարքս-լենինյան տեսության դիրքերից ցույց են տալիս ժամանակակից բուրժուական պատմագրության սնանկությունը, նրա հակասովետական, հակակոմունիստական բնույթը։

Ուշադրության են արժանի ամսագրի № 5-ում տպագրված Ուկրաինայի կոմկուսակցության Կենտկոմի քարտուղար Ա. Սկարայի «Կուսակցությունը և ժողովուրդը», Լ. Լևշինի և Ա. Երոմինի «Սոցիալիզմի տնտեսական առավելությունները և նրանց իրականացման ուղիները», Վ. Կորովի «Սովետական սոցիալիստական դեմոկրատիան», Գ. Սորոկինի «Համաշխարհային սոցիալիստական տնտեսությունը, զարգացման օրենքները, պատմական նախադրյալները», Տ. Տիմոֆեևի «Կապիտալիստական երկրների բանվոր դասակարգը համաշխարհային հեղափոխական պրոցեսում» և այլ հոդվածները։ Այս հոդվածներում քննության են առնվում սոցիալիզմի տնտեսական ֆակտորների դերը հասարակության զարգացման գործում, նրանց իրականացման ուղիները, ցույց են տրված սոցիալիզմի առավելությունների օբյեկտիվ հիմքերը կապիտալիզմի նկատմամբ, բացահայտված են սոցիալական հակասությունների դասակարգային պայքարի նշանակալի սրումը միջազգային արենայում, միջազգային հեղափոխական բանվորական և հակաիմպերիալիստական շարժումների զարգացումը և այլ կարևոր հարցեր։

ВОПРОСЫ ИСТОРИИ

1966, № 3 եվ № 4

Ամսագրի № 3-ը սկսվում է ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ա. Գուբերի «Պատմական գիտության 12-րդ միջազգային կոնգրեսը» հոդվածով, որտեղ հակիրճ անդրադառնալով կոնգրեսի նախապատրաստման և անցկացման հարցերին, քննության է առել մի շարք զեկուցումներում բարձրացված հարցերը, տվել տարբեր հոսանքների բնութագիրը։

Ամսագրի ուշագրավ նյութերից են Ա. Ե. Իոֆֆեի «ՍՍՀՄ-ի հետ արտասահմանի բարեկամության ընկերության գործունեությունը», «Սովետները վերականգման շրջանում», Ի. Ն. Օլեդինայի «Ժամանակակից ամերիկական և անգլիական պատմագրությունը ՍՍՀՄ-ում ինդուստրացման մասին» և այլ հոդվածները։ Ամսագիրը ունի «Հաղորդումներ», «պատմական գիտությունը ՍՍՀՄ-ում», «հիշողություններ», «տեսություն և գրախոսություն», «փաստեր, իրադարձություններ, մարդիկ» և այլ բաժիններ։

Ամսագրի 4-րդ համարի առաջին հոդվածը կրում է «Սովետական բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրության մեթոդոլոգիական ասպեկտները» վերնագիրը, որի հեղինակն է Օ. Ի. Շկարատանը։ Հեղինակը իր հոդվածում տալիս է բանվոր դասակարգի պատմության վերաբերյալ հրապարակված մենագրությունների ու հետազոտությունների համառոտ տեսությունը։ Նա առաջ է քաշում այն հարցը, որ բանվոր դասակարգի պատմությունը հանդիսանալով մեր հասարակության զարգացման պատմություն, պետք է իր ուրույն տեղն ունենա պատմագրության մեջ։ Այդ պատմության ուսումնասիրությունը, ըստ հեղինակի, պետք է ընթանա հետևյալ ուղղություններով՝ բանվորների կազմի թվի փոփոխումը, նոր բանվորական կադրերի պատրաստումը և դաստիարակումը, կուլտուրայի, կուլտուր-տեխնիկական մակարդակի աճը, կենսամակարդակը, կենցաղը, քաղաքական ակտիվությունը, բանվորական միջավայրից նոր ինտելիգենցիայի առաջքաշումը, արտադրության և հասարակության կառավարմանը բանվորների մասնակցությունը, արտադրական գործունեությունը և աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ձևավորումը, բուրժուական մնացուկների վերացումը և բանվոր դասակարգի լայն խավերի մեջ կոմունիստական բնավորության գծերի առաջացումը։

Հետաքրքրություն են ներկայացնում ամսագրի «Վիճաբանություն և քննարկում» բաժնում տպագրված Մ. Ս. Ջունուսովի «Ազգը որպես մարդկանց սոցիալ-էթնիկական ընդհանրություն», Վ. Մ. Խոլոդկովսկու, Գ. Ս. Մատվեևայի «Մոնղոլական ժողովրդական հանրապետությունում բանվոր դասակարգի ձևավորման փորձից», Ե. Վ. Գունտովայի «Միջնադարյան էպոխայի գյուղացիության գաղափարախոսության մի քանի պրոբլեմներ» և այլ հոդվածները։